ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՐԻՍՏԻՆԱ ՄԵԼՍԻ ԹՈՐԳՈՄՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ

**ԺԳ.00.02 - ‹‹Դասավանդման և ուսուցման մեթոդիկա››
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սուսաննա Ավետիքի Չալաբյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Իգոր Կարապետի Կարապետյան**
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սուսաննա Խուրշուդի Բաղդասարյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. դեկտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52^{ա}, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. նոյեմբերի 16-ին:

058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Արևիկ Փանոսի Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը. 21-րդ դարը մեդիահոսքերի, նորարարությունների, նորարար կրթական տեխնոլոգիաների, տեխնոլոգիական առաջընթացի, նորարարական կրթության, առցանց գործիքների և նորարարական կրթական հարթակների դարաշրջան է: Բարձրագույն կրթության հարացույցը ուղղված է սովորողների մոտ կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչը սերտորեն առնչվում է կոմունիկացիոն, տեղեկատվական հմտություններին, համացանցի արդյունավետ կիրառմանը և հանգեցնում տեղեկատվության զանգվածային տարածմանը և գիտելիքի ծավալի շարունակական ընդլայնմանը: Սովորողների կարևորագույն նպատակներից են գիտելիքի ձեռքբերումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը, որոնք կարևորագույն դեր են խաղում անձի մասնագիտացման համար: Հետևաբար բարձրագույն կրթության նպատակն է մրցունակ մասնագետների պատրաստումը, որը ենթադրում է համապատասխան մասնագիտական գիտելիքի ու հմտությունների ձեռքբերում: Ամեն օր նորանոր կրթական հարթակները, առցանց կրթական ռեսուրսները, վեբկայքերը և ուսուցման կառավարման համակարգերը (ՈՒԿՀ) հանգեցնում են նրան, որ կրթական ոլորտի մասնագետներն ու մասնակիցները անպայման հմտանան ՈՒԿՀ-ների կիրառման գործում և առավելագույնս օգտվեն նոր իրողության ընձեռած հնարավորություններից:

Ոչ լեզվական բուհերում օտար լեզուների դասավանդման հարացույցը և կիրառվող մեթոդները էականորեն տարբերվում են մասնագիտական բուհերում կիրառվող մեթոդներից: Լեզվական մասնագիտական բուհերում լեզուներին հատկացվող դասաժամերը անհամեմատ ավելի շատ են ոչ լեզվական բուհերում հատկացվող դասաժամերից (ժամաքանակից): Ոչ լեզվական բուհում օտար լեզվին հատկացվում է շաբաթական 1 դասաժամ, հազվագյուտ դեպքերում՝ շաբաթական 2 դասաժամ:

Հետևաբար, կանգնեցինք մի մարտահրավերի առջև՝ առանձնացնել և կիրառել արդյունավետ մեթոդներ, որոնք նվազագույն ժամանակահատվածում կնպաստեն ուսանողների գործարար անգլերենի իմացությանը:

Տնտեսագետը կամ գործարարը պետք է անդադար կատարելագործի իր մասնագիտական կարողություններն ու հմտությունները, ինչին նպաստում է համաշխարհային արդի գրականությունից օգտվելը, նորանոր զարգացումներին իրազեկված լինելը: Հետևաբար օտար լեզվի գիտելիքը, հմտությունները և գործարար անգլերենի իմացությունը պարտադիր են այդ նպատակներին

հասնելու համար: Հայտնի է, որ գործարար անգլերենն ունի իր առանձնահատկությունները՝ բառապաշարի նրբություններ և դժվարություններ, եզրույթների երկիմաստություն, որոշ քերականական ձևեր, որոնք ավելի շատ են կիրառվում, ինչպես նաև եզրույթների ճիշտ օգտագործման և մտապահման մեթոդների ընտրություն ու կարևորություն:

Ահա սրանցով է պայմանավորված մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն՝ առդեմ ուսուցման համադրումն է «համակցված ուսուցմանը», որի շնորհիվ կարող ենք ոչ լեզվական բուհում բարձրացնել և բարելավել անգլերենի իմացության մակարդակը:

Ուսումնասիրության նպատակից բխում են հետևյալ առաջադիր խնդիրները.

Ուսումնասիրության առաջադիր խնդիրները:

1. Ուսումնասիրել անգլերենի դասավանդման ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդները,
2. Առանձնացնել այն բառագիտական, քերականական և բառապաշարին վերաբերող նյութերը, որոնք կխթանեն օտար լեզվի տիրապետման չորս հմտությունների (ընթերցանության, բանավոր և գրավոր խոսքի, ունկնդրման) զարգացմանը, որոնք անհրաժեշտ են տնտեսագիտական բուհում անգլերենը որպես օտար լեզու դասավանդելու համար,
3. Կազմել տարբեր բառագիտական, բառակազմական և քերականական վարժությունների մի համակարգ, որը հնարավորություն կտա, կիրառելով վերոնշյալ առցանց հարթակները, բարձրացնել օտար լեզվի դասավանդման արդյունավետությունը տնտեսագիտական բուհում,
4. Անգլերենի դասավանդման գործընթացում համակցել առդեմ դասերը առցանց ռեսուրսներով,
5. Փորձարկել համակցված եղանակով ուսուցումը ոչ լեզվական բուհում, վերլուծել հավաքագրված արդյունքները և բացահայտել մեթոդի արդյունավետությունը, համադրել փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքները՝ օգտագործելով ժամանակակից կրթական հարթակները (Moodle, kahoot, dotstorming, padlet, Blackboard, Google docs, nearpod, e-portfolio և այլն) և ուսումնասիրել դրանց կիրառության արդյունավետությունը դասերի ընթացքում:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Ոչ լեզվական բուհում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում առաջին անգամ կազմակերպվել և իրականացվել է համակցված ուսուցում՝ հստակեցնելու այդ մեթոդի արդյունավետությունը օտար լեզվի (անգլերենի) իմացության մակարդակի բարձրացման նպատակով:
2. Մշակվել, վերբեռնվել են ուսումնական պլանով նախատեսված դասեր առցանց հարթակներում և հետագայում կազմակերպվել են համակցված մեթոդով դասեր՝ հստակ կազմված և մշակված վարժություններով և առաջադրանքներով, և հիմնավորվել է վերջիններիս արդյունավետությունը:
3. Մշակվել են գործարար անգլերենի բառապաշարի հարստացմանն ու ամրապնդմանը ուղղված առցանց առաջադրանքներ՝ առցանց գործիքների օգնությամբ, և հիմնավորվել է դրանց շահավետությունն ու արդյունավետությունը:
4. Մշակվել է օտար լեզվի ուսումնառության ընթացքում պլատոյի էֆեկտի հաղթահարման մոտիվացիայի մատրիցը՝ հիմք ընդունելով ուսանողների արտաքին, ներքին, դրական և բացասական մոտիվացիաները, ինչը անվանել ենք «Պլատոյի մատրից» (Plateau Matrix): Մշակվել է PINE մոդելը, որը նպաստում է լեզվի ուսուցման ընթացքում պլատոյի էֆեկտի հաղթահարմանը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին առավել շահադրդված լինել անգլերենի տիրապետման հարցում:
5. www.nearpod.com առցանց հարթակում մշակվել են 6 առցանց դասեր՝ իրենց առաջադրանքներով, վարժություններով, խաղերով և թեստերով, որոնք իրականացվել են համակցված ուսուցման մեթոդով, և դրանց հաշվետվությունների և թեստավորման արդյունքների հիման վրա հիմնավորվել է համակցված ուսուցման մեթոդի արդյունավետությունը:
6. Ստուգիչ, ընթացիկ և ամփոփիչ թեստավորման, ինչպես նաև առցանց դասերի հաշվետվություններից հավաքագրված տվյալներն ու արդյունքները վերլուծվել են Microsoft Excel ծրագրի միջոցով, կազմվել են արդյունքների ներկայացման տրամագրեր, որոնք հավաստում են իրականացված ուսուցման արդյունավետությունը: Թեստերի տվյալները հավաքագրվել են փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքներից, իսկ առցանց դասերի արդյունքները և տվյալները՝ միայն փորձարարական խմբերից են ստացվել և ամփոփվել:
7. Մեր կողմից մշակվել և առաջարկվել է «համակցված ուսուցման» սեփական սահմանումը:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

1. Համակցված ուսուցման մեթոդով դասավանդումը ոչ լեզվական, տնտեսագիտական բուհում հստակեցրեց այս ուսուցման արդյունավետությունը, հուսալիությունն ու հանգեցրեց գործարար անգլերենի գիտելիքի գրեթե կրկնակի աճին:
2. Մեր կողմից իրականացրած մանրակրկիտ ուսումնասիրության և ուսանողների շրջանում փորձարարական դասավանդման վերջում ստացված արդյունքներից է բխում համակցված ուսուցման մեր մշակած սահմանումը, ինչը հստակ արտացոլում է համակցված ուսուցման էությունը: Այն կնպաստի արդյունավետորեն կիրառել համակցված ուսուցումը անգլերենի դասավանդման ընթացքում:
3. Մեր կողմից մշակված «Պլատոյի մատրիցը» և PINE մոդելը կնպաստեն ուսանողների մոտ անգլերենի ուսուցման ընթացքում պլատոյի էֆեկտի հաղթահարմանը, մոտիվացիայի և անգլերենի գիտելիքի ընդլայնմանը և գործարար անգլերենի բառապաշարի հարստացմանը:
4. Մշակված առցանց դասերը՝ առցանց հարթակներում, որոնք ներառում են վարժություններ, առաջադրանքներ և հանձնարարություններ կնպաստեն համակցված ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:
5. Գործարար անգլերենի բառապաշարի հարստացմանն ու ամրապնդմանն ուղղված առցանց ռեսուրսները, որոնցից են մտքի քարտեզները, հուշաքարտերը և բառային ամպերը, կնպաստեն անգլերենի բառապաշարի հարստացմանը, ինչը անվանել ենք «բառապաշարի արագ ուսուցում» (reactive vocabulary teaching):

Հետազոտության տեսական նշանակությունը

Համակցված ուսուցման մեթոդով դասավանդման տեսանկյունից ուսումնասիրվել, վերլուծվել և համակարգվել է մեթոդական գրականություն, ինչպես նաև անգլերենի դասավանդման վերաբերյալ տարբեր հետազոտություններ: Մշակվել են առցանց դասեր, վերբեռնվել առցանց հարթակներում, մշակվել են PINE և «Պլատոյի մատրիցի» մոդելները, որոնք նպաստում են գործարար անգլերենի բառապաշարի և լեզվական գիտելիքի բարելավմանն ու ամրապնդմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության ընթացքում իրականացրած գործընթացները, տնտեսագիտական գրականությունից վերցված SWOT Analysis, Gap Analysis, Decision Tree վերլուծական հետազոտության մոդելները, կիրառված մեթոդներն ու փորձարարական դասավանդման սկզբունքների արդյունավետ օգտագործումը հանգեցրել է այն համոզմունքին, որ համակցված ուսուցումը բարելավում

է գործարար անգլերենի իմացությունը և ամրապնդում է յուրացրած գիտելիքը: Աշխատանքում մշակվել է առցանց դասերի համալիր մի համակարգ, որտեղ զետեղված առաջադրանքները և վարժությունները բարձրացրեցին իրականացված դասերի արդյունավետությունը: Դրանց հիման վրա արձանագրվել են գիտելիքի բարելավում և գործարար անգլերենի բառապաշարի հարստացում:

Առցանց հարթակներում մշակված և կազմված դասերը, առաջադրանքներն ու վարժությունների համակարգը կարելի է կիրառել և օգտագործել տնտեսագիտական բուհում անգլերենի կամ այլ օտար լեզուների ուսուցման ընթացքում, որը նպաստում է համակցված եղանակով դասընթացների արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, լեզուների ամբիոնում, Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում և գիտական հրապարակումներում՝ հրատարակված տարբեր ամսագրերում և գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

‹‹Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում›› վերնագրով ատենախոսությունն ընդգրկում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ և առաջարկություններ, գրականության ցանկ, գծապատկերներ, տրամագրեր, աղյուսակներ և թվով 25 հավելված: Աշխատանքի ծավալը 168 համակարգչային էջ է: Ատենախոսությանը կից www.nearpod.com համացանցային հարթակում մշակվել են առցանց դասեր, առցանց մտքի քարտեզներ, հուշաքարտեր և բառային ամպեր և տրվել են դրանց առցանց հղումները, ինչպես նաև Google forms-ում իրականացված հարցումներն ու արդյունքները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության ներածական մասում հիմնավորվել է սույն հետազոտության արդիականությունը, ներկայացվել են նպատակն ու խնդիրները, պաշտպանության ներկայացված դրույթները, ինչպես նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է **«Անգլերենի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները»** բաղկացած է 2 ենթագլխից, որտեղ ներկայացված են առցանց հաղորդակցման միջոցների և տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները անգլերենի դասավանդման ընթացքում և անգլերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները և յուրաքանչյուր դասավանդման մեթոդի առավելություններն ու թերությունները:

Առաջին՝ **«Հաղորդակցման միջոցների և տեխնոլոգիաների դիդակտիկ հնարավորությունները անգլերենի դասավանդման գործընթացում»** ենթագլխում ներկայացված են ուսումնասիրված հաղորդակցական միջոցների և տեխնոլոգիաների դիդակտիկ հնարավորությունները, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառումը, ինչը մեծապես փոխել է մեր գիտելիքների ստեղծման, տարածման ու վերափոխման ձևերը:

Երկրորդ՝ **«Անգլերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները, դրանց առավելություններն ու թերությունները»** խորագրով ենթագլխում ուսումնասիրվել են և վերլուծվել անգլերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները, մասնավորապես՝ թարգմանական-քերականական մեթոդը, ուղիղ մեթոդը կամ բնական մեթոդը, աուդիոլինգվալ մեթոդը, լեզվի հաղորդակցական դասավանդման մեթոդը, բովանդակահեն ուսուցումը, առաջադրանքների վրա հիմնված լեզվի դասավանդման մեթոդը, ֆիզիկական արձագանքի մեթոդը և դոգմե մեթոդը, որը նորովի է մեկնաբանվել և ներկայացվել: Առանձնացվել են վերոնշյալ մեթոդների բնորոշ գծերը, առավելություններն ու թերությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Անգլերենի համակցված ուսուցման մեթոդը՝ ուսումնական գործընթացի բարելավման պայման»** բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ **«Անգլերենի համակցված ուսուցման մեթոդի էությունը, առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները»** վերնագրով ենթագլխում ուսումնասիրվել և հետազոտվել է «համակցված ուսուցման» մեթոդին վերաբերող մեթոդական գրականություն, գոյություն ունեցող սահմանումները, մեթոդի հնարավորություններն ու

առանձնահատկությունները, տարբեր դասավանդողների կողմից իրականացված փորձերն ու դրանց արդյունքները, համակցված ուսուցման տարատեսակները՝ շրջված լսարանի, փոխատեղման և ճկուն մոդելները (flipped classroom model, rotation model, and flex model): Կատարված հետազոտության արդյունքում ներկայացվել է մեր կողմից առաջարկվող սահմանումը. *«համակցված ուսուցումը առդեմ դասերի հարստացումն է առցանց կրթական տարաբնույթ տեխնոլոգիաներով և հարթակներով, և այդ ուսուցումը իրականացվում է շարունակաբար՝ ընդգրկելով դասի տևողության մոտ 60-65%-ը, երբ առցանց ուսումնական նյութերը հեղինակվում են դասավանդողի կողմից՝ նախատեսված կոնկրետ դասընթացի և խմբի համար»*:

Երկրորդ՝ **«Ստեղծարարությունը և ուսուցման կառավարման համակարգերի դերը համակցված ուսուցման պայմաններում»** ենթագլխում ուսումնասիրված գրականության հիման վրա ընդգծվել են կրթական թվային ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունները, որոնցից են. կրթական տեղեկատվության անսահմանափակ հնարավորություններ, ուսումնական նյութի բովանդակության հստակություն և գնահատման համակարգի թափանցիկ և հասկանալի բնույթ: Քանի որ Moodle և Blackboard ՈւԿՀ-ները հնարավորություն են տալիս շարունակաբար հետևելու ուսումնական գործընթացին և մշտադիտարկելու ուսանողների առաջադիմությունը, առանձնակի ուշադրություն է դարձվել դրանց օգտագործմանը, առավելություններին և թերություններին: Ուսումնասիրվել և բացահայտվել է ուսումնառության գործընթացում ստեղծարարության կարևոր դերն ու նշանակությունը, և այս ոլորտի հետազոտողների իրականացրած աշխատանքի արդյունքում հայտնաբերված երևույթները՝ ինչպես համակցել ստեղծարարությունը և դասավանդումը, երբ դասավանդողն իր գիտելիքների հետ մեկտեղ լսարան է բերում իր մանկավարժական հմտություններն ու մասնագիտական որակները (կոմպետենցիաները):

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Համակցված ուսուցմամբ անգլերենի դասավանդման գործընթացը և առցանց հարթակների օգտագործման հնարավորությունները»** բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Համակցված ուսուցման կիրառումը բուհերում անգլերենի դասավանդման գործընթացում»** ենթագլխում հստակ անդրադարձ է կատարվել համակցված ուսուցման հիմնահարցին, շեշտադրվել է, որ դասախոսներին և դասավանդող անձնակազմին անհրաժեշտ է վերապատրաստել, որպեսզի նրանք տիրապետեն առցանց և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման և կիրառման կարողություններին և հմտություններին: Անհրա-

ժեշտության դեպքում, ինչպես նշում են շատ մեթոդիստներ, պետք է հիմնադրել համալսարանական հատուկ կառույց, որը կապահովի համակցված եղանակով ուսուցման համար բոլոր պայմանները (լաբորատորիաներ, համացանցի հասանելիություն, ծրագրակազմ և այլն): Դասախոսական կազմը պետք է ունենա փորձ և հմտություններ իրենց դասընթացներում համակցված ուսուցումը ծրագրելու և իրականացնելու համար: Ուսումնասիրվել և ներկայացվել են համակցված ուսուցման դժվարություններն ու առավելությունները, որոնք են՝

1. Հեռավորության վրա միմյանց հետ համագործակցելու հնարավորություն:
2. Ավելի շատ ճկունություն:
3. Փոխազդեցության մեծացում:
4. Ավելի որակյալ ուսուցում:

Երկրորդ՝ **«Ոչ լեզվական բուհում փորձարարական դասավանդման գործընթացը, վերլուծական գործիքների օգնությամբ հետազոտության իրականացումը»** ենթագլխում ներկայացվել են ուսանողների շրջանում իրականացրած գործարար անգլերեն սովորելու նպատակների վերլուծության հարցման արդյունքները (2021-2022 և 2022-2023 ուստարիներ), որոնք իրականացվել են առցանց գործիքի՝ Google forms-ի օգնությամբ:

Աղյուսակներով և նկարներով ներկայացված են համակցված ուսուցման փորձարարության անցկացման փուլերի բնութագիրը, փորձարարության կազմակերպման պլանը և համակցված ուսուցման պլանավորման և նախագծման ժամանակացույցը, և համակցված ուսուցման գործընթացի բաժանումը՝ ըստ 5 փուլերի: Մանրամասն ներկայացվել են փորձարարական և ստուգողական խմբերը՝ ըստ բաժանման առանձնահատկությունների և ուսանողների թվի:

Իրականացվել և ներկայացվել է SWOT վերլուծություն (համակցված ուսուցման մեթոդով դասավանդելու ուժեղ և թույլ կողմերը, ընձեռած հնարավորությունները և հավանական սպառնալիքներն առանձնացնելու համար), Gap վերլուծություն (ուսանողների շրջանում անգլերենի գիտելիքի բացթողումների վերլուծությունը, և նախանշվել են ցանկալի արդյունքները), 2021-2022 և 2022-2023 ուստարիների 1-ին կուրսի 1-ին կիսամյակում սովորող ուսանողների շրջանում հարցման (ինչը աշխատանքում ներկայացվել է աղյուսակներով և տրամագրերով) արդյունքների հիման վրա մշակվել է մեր կողմից «համակցված ուսուցման» կազմակերպման «որոշման կայացման ծառի» սկզբունքը (Decision Tree)՝ նորովի կիրառելով տնտեսագիտական գրականության մեջ լայնորեն օգտագործվող վերլուծական գործիքները՝ դրանք անգլերենի դասավանդման տեսանկյունից դիտարկելով և կիրառելով:



Համակցված ուսուցման կազմակերպման հիմնավորումը՝ ըստ ուսանողների շրջանում հարցման արդյունքների

Նախապատրաստական փուլում մեր կողմից մշակվել են համակցված դասերի պլաններ, որտեղ մանրամասն ներկայացվել են թե՛ դասերի թեմաները, թե՛ դասավանդման եղանակը, թե՛ կիրառվող առցանց գործիքները և հարթակները: Համակցված դասերի թեմաները լիովին համապատասխանում են ոչ լեզվական բուհի՝ ՀՊՏՀ-ի լեզուների ամբիոնի ուսումնական ծրագրին:

Մեր կողմից ուումնասիրվել և վերլուծվել են «լեզվի ուսումնառության ընթացքում պլատոյի էֆեկտ» երևույթը և առաջարկվել են դրա հաղթահարման ուղիները՝ առցանց ռեսուրսների և հարթակների միջոցով: Այս ուսումնասիրության ընթացքում մեր կողմից մշակվել է Պլատոյի մատրից, հիմնվելով Բոստոնի մատրիցի վրա, սակայն այն վերափոխել ենք՝ հարմարեցնելով համակցված ուսուցման ձևաչափին: Պլատոյի մատրիցի հիմքում ընկած մեր կողմից վերլուծված մոտիվացիաների տեսակները (positive, intrinsic, negative, extrinsic motivation) ուսումնասիրելիս առանձնացրել ենք մի նոր երևույթ և անվանեցինք այն PINE (որը առաջացավ մոտիվացիաների տեսակների բառերի սկզբնատառերից) և ստեղծեցինք մի նոր մոդել, որը անվանեցինք PINE մոդել: Այն ներառում է լեզուների՝ մեր դեպքում անգլերենի ուսումնառության առանցքային հմտություններ՝ վերարտադրման և ընկալման հմտություններ և

դասախոսի դերակատարումն այդ հմտությունների զարգացման հարցում՝ համակցված ուսուցման պայմաններում:

Լեզվի ուսուցման ընթացքում պլատոյի էֆեկտը հաղթահարելու և ուսանողների մոտ նոր գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն առաջացնելու համար մեր կողմից մշակվել է մոտիվացիայի ժամանակակից կաղապար՝ հաշվի առնելով դրական, բացասական, արտաքին և ներքին մոտիվացիաները, որը անվանեցինք «Պլատոյի մատրից»:



Մոտիվացիայի տեսակները՝ լեզուների ուսուցման ընթացքում պլատոյի էֆեկտը հաղթահարելու համար (Պլատոյի մատրից)

Այս մոդելում առանցքային դեր են խաղում ուսանողների վերարտադրման և ընկալման հմտությունները և դրանց կատարելագործումը, քանի որ գործարար անգլերենի բառապաշարի տիրապետման համար առաջին հերթին անհրաժեշտ է զարգացնել ուսանողների ընկալման և վերարտադրման հմտությունները:



Ավանդական՝ առդեմ դասավանդումը հիմքն է սովորելու և դասավանդելու. ինչը համեմվում է առցանց տեխնոլոգիաներով:

Սովորելու մոտիվացիան՝ հետագայում առավել բարձր արդյունքներ գրանցելու համար (մեր կողմից մշակած PINE մոդել)

**Դասախոսի հենարանային գործողությունները (scaffolding) ենթադրում են, որ դասախոսը սկզբում մեծապես օգնում, օժանդակում է ուսանողին, իսկ որոշ ժամանակ անց, երբ ուսանողը ձեռք է բերում բավարար գիտելիքներ և հմտություններ, սրանձնում է պարզապես դիտորդի դեր:*

Երրորդ՝ **«Ոչ լեզվական բուհում առցանց հարթակների միջոցով անցկացվող անգլերենի դասերը, առանձնահատկություններն ու ամփոփված արդյունքները»** խորագրով ենթագլխում ներկայացված են փորձարարական դասավանդման գործիքակազմը, ընթացքը և ստացված արդյունքները, առանձնացվել և ներկայացվել են այն առցանց հարթակները և գործիքները, որոնք կիրառվել են փորձարարական դասավանդման ողջ ընթացքում, որոնց հղումները ներկայացված են աշխատանքում և հավելվածներում: Անդրադարձ է կատարվել www.nearpod.com առցանց հարթակին, որտեղ մեր կողմից նախապես մշակվել էին վեց առցանց դասեր, որոնք ընդգրկում են անգլերենի առանցքային հմտությունները՝ ընթերցանություն, բանավոր և գրավոր խոսք և ունկնդրում և հստակ մշակած հանձնարարությունների, վարժությունների, մոդելավորող խաղերի և կարճ թեստերի միջոցով ստուգվում է այն, թե որքան լավ են փորձարարական խմբի ուսանողները հասկացել և յուրացրել առցանց դասերի նյութերը: Նկարների և դիագրամների միջոցով ներկայացված է առցանց դաս՝ ներառյալ ընթերցանություն, մշակած խաղեր, թեստեր, վարժություններ և դրանց կատարման արդյունքները, ինչպես նաև www.nearpod.com

առցանց հարթակի ընձեռած հնարավորությունները: www.nearpod.com առցանց հարթակից ավտոմատ կերպով ստացված հաշվետվությունների հիման վրա կազմել ենք տրամագիր, որտեղ ներկայացրել ենք 2021-2022 և 2022-2023 ուստարիների փորձարարական խմբերում անցկացված առցանց դասերի միջինացված արդյունքը՝ ըստ թեմաների, որոնք աշխատանքում ներկայացված են տրամագրերով և աղյուսակներով:



Փորձարարական խմբերում առցանց դասերի միջինացված արդյունքը

Ուսումնասիրվել են և ներկայացվել առցանց գործիքներ՝ մտքի քարտեզներ (www.mindmeister.com, www.mindmup.com, www.miro.com, և www.venngage.com), հուշաքարտեր (www.cram.com, www.quizlet.com, www.visme.co, www.kitzkikz.com, www.goconqr.com, www.classmaster.io, և www.flashcard.online) և բառային ամպեր (www.mentimeter.com և www.wordclouds.com) իրենց հնարավորություններով և առավելություններով: Ներկայացվել են նաև դրանց կիրառման ձևերն ու եղանակները և իրականացված փորձարարական դասավանդման ընթացքում մեր և ուսանողների համատեղ մշակած և ստեղծած տարբերակները: Բառապաշարի հարստացման և ամրապնդման այս առցանց գործիքները և հարթակները նպաստում են գործարար անգլերենի բառապաշարի ընկալմանը, ամրապնդմանը և կիրառմանը:



Մտքի քարտեզ «գործարարություն» թեմայի շուրջ՝ առցանց դասերի ընթացքում առանձնացված սխալների և անծանոթ բառերի ամրապնդման համար
(առցանց հղումը տես https://infograph.venngage.com/view/5f50be45-cdeb-444d-bec6-8b6eeabc582a)

Գործարար անգլերենի բառապաշարի հարստացման և ամրապնդման վերոնշյալ առցանց ռեսուրսների և գործիքների ուսումնասիրման և կիրառման և դրանց ընձեռած նոր հնարավորությունների արդյունքում մշակվել է օտար լեզուների դասավանդման մի մոտեցում, որն անվանել ենք «բառապաշարի արագ ուսուցում» (“reactive vocabulary teaching”):

Հետազոտության առանցքային մաս է փորձարարական դասավանդման ընթացքում ստացված արդյունքների ամփոփումը, որի համար նախընտրելի մեթոդ ընտրվեց թեստավորման տարբերակը, ինչը տվեց հնարավորություն վերահսկելու ուսանողների առաջընթացը: Դրա արդյունքում տեսանելի և չափելի է իրականացրած հետազոտությունը՝ համակցված ուսուցման միջոցով ուսանողների գործարար անգլերենի իմացության ավելի բարձր արդյունք-

ների արձանագրման տեսանկյունից: Կազմվել էին ստուգիչ թեստ, 3 ընթացիկ թեստեր և ամփոփիչ թեստ, որտեղ ներառել էինք տարբեր առաջադրանքներ, որոնք ստուգում էին ընթերցանությունն իր տարբեր առաջադրանքներով և գործարար անգլերենի բառապաշարը:

Թեստերի արդյունքները ներկայացնում ենք ստորև տեղադրված տրամագրում:



2021-2022 և 2022-2023 ուսպարիների փորձարարական և սպուգողական խմբերի թեսպավորման արդյունքներ

Ստուգողական և փորձարարական խմբերում ներգրավված ուսանողների առաջադիմությունը ցույց է տալիս, որ համակցված ուսուցման եղանակով անցկացված դասերի արդյունքում՝ փորձարարական խմբերում գրանցվել է գործարար անգլերենի գիտելիքի և բառապաշարի կրկնակի աճ: Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբերում ստուգիչ և ամփոփիչ թեստերի միջև գրանցվել է հետևյալ առաջընթաց. 2021/2022 ուստարվա խմբի մոտ՝ 47.7% և 2022/2023 ուստարվա խմբի մոտ՝ 37.04%, մինչդեռ ստուգողական խմբերի մոտ գիտելիքի աճը միջինում կազմում է 26.7% և 23.9%:

Համակցված եղանակով կազմակերպված դասընթացի ավարտին փորձարարական խմբերում անցկացրինք հարցում: Առցանց հարթակում (Google forms) կազմեցինք նոր հարցաթերթիկ և հավաքագրեցինք ուսանողների կարծիքը՝ համակցված դասերի, առցանց հարթակների և գործիքակազմի վերաբերյալ, որի արդյունքները ներկայացված են աշխատանքում տրամագրերով և դիագրամներով:

Փորձարարական ուսուցումը հաստատեց այն դրույթը, որ համակցված ուսուցման արդյունքում հնարավոր է գրանցել դասավանդվող առարկայի գիտելիքների առավել արդյունավետ և համապարփակ յուրացում, գիտելիքի հարստացում և գործարար անգլերենի իմացության կտրուկ բարձրացնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերլուծվել են գոյություն ունեցող դասավանդման մեթոդների առավելություններն ու թերությունները, և ընդգծվել են նորարարական «համակցված ուսուցման» մեթոդի ակնհայտ առավելություններն ու կարևորվել է դրա համապատասխանեցումը առկա իրավիճակին և թվային աշխարհին:
2. Մեր կողմից առցանց հարթակներում մշակված դասերի միջոցով իրականացված համակցված ուսուցումն առդեմ դասերի ընթացքում, ինչպես նաև կատարած ինքնուրույն աշխատանքը և հանձնարարություններն էականորեն նպաստեցին փորձարարական խմբերի անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանը:
3. Գործարար անգլերենի բառապաշարի զարգացման, սովորած բառերի կրկնողության, մտավոր բառապաշարում բառերի ամրապնդման և ասոցիատիվ կերպով բառերի զարգացման համար ընտրված մտքի քարտեզները, հուշաքարտերը և բառային ամպերը արդյունավետ առցանց միջոց և գործիք են: Դրա մասին են վկայում փորձարարական խմբերի ուսանողների գրանցած առաջընթացը և ամփոփիչ թեստավորման արդյունքները: *Նման տեխնիկայով գործարար անգլերենի բառապաշարի հարստացումն ու ամրապնդումը մենք անվանում ենք բառապաշարի **ուսուցման արագ անդրադարձման մոտեցում (reactive vocabulary teaching)***:
4. www.nearpod.com առցանց հարթակում մեր կողմից հեղինակած տեքստերը, վարժությունները, առաջադրանքները, ունկնդրման հանձնարարությունները, մոդելավորող խաղերը գրեթե կրկնակի անգամ բարձրացրին փորձարարական խմբերի ուսանողների գիտելիքի մակարդակը, ինչը հաստատվեց ամփոփիչ թեստավորման արդյունքներով:
5. Փորձարարական խմբերի ուսանողների ցույց տված արդյունքները՝ հավաքագրված թեստավորման և առցանց դասերի ընթացքում, վկայում և հաստատում են մեր կողմից ձևակերպված այն միտքը, որ համակցված ուսուցման արդյունքում հնարավոր է գրանցել դասավանդվող առարկայի գիտելիքների առավել արդյունավետ և համապարփակ յուրացում, գիտելիքի հարստացում և գործարար անգլերենի իմացության կտրուկ բարձրացնում:
6. Առցանց կրթական տեխնոլոգիաների, հարթակների, առցանց գործիքների ընձեռած հնարավորությունները և ներդրումը բարձրագույն կրթական համակարգում պահանջում է, որ բոլոր ներգրավված կողմերը վերանայեն, վերափոխեն և թվայնացնեն ուսումնական նյութերը՝ արձագանքելով 21-րդ դարում առաջ եկած մարտահրավերներին:
7. Առանձնացվել և ընդգծվել են ուսումնասիրված կրթական թվային ռեսուրսների արդյունավետ կիրառման հնարավորությունները, ինչպես նաև դրանց հուսալիությունը և արձանագրած արդյունավետությունն անգլերենի դասավանդման ընթացքում:

8. Մեր կողմից մշակված «Պլատոյի մատրիցը» և PINE մոդելը կնպաստեն ուսանողների մոտ անգլերենի ուսուցման ընթացքում պլատոյի էֆեկտի հաղթահարմանը, մոտիվացիայի և անգլերենի գիտելիքի ընդլայնմանը և գործարար անգլերենի բառապաշարի հարստացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած հետևյալ աշխատանքներում՝

1. Торгомян К.М., Использование коммуникационных технологий в вузах и модель их применения в образовательном процессе.//Research and Founder Group, Poland, "Topical Issues of Science and Education", Warsaw, Poland, 2017, p. 37-42:
2. Torgomyan K.M, Teaching English online: encountered challenges and solutions.// ՀՊՏՀ Բանբեր, 3 /59/, Երևան 2020, p. 179-192:
3. Torgomyan K.M., Online assessment of students' foreign language competence: modern techniques and methods.// ՀՊՏՀ Բանբեր, 2021 (2), p. 201-215:
4. Torgomyan K.M., Effective scaffolding strategies in CBI in Higher Education: online mode of teaching.// НИЦ МИСИ, Международная научно-практическая конференция, г.Москва, 2021, p. 274-291:
5. Chalabyan S.A., Torgomyan K.M., Implementation of blended learning in teaching English at ASUE: from experiment to results.// ԵՊՀ, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 2/33/, Երևան 2022, p. 69-82.
6. Torgomyan K.M., Language learning plateau in the context of Business English: emerging causes and suggested solutions by means of online tools and technologies.// Բանբեր ՀՊՏՀ-ի, 5/71/, Երևան 2022, p. 139-148:

ТОРГОМЯН КРИСТИНА МЕЛСОВНА
МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА СМЕШАННОГО ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ В НЕЯЗЫКОВОМ ВУЗЕ

Диссертация на соискание учёной степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 "Методика преподавания и обучения" (английский язык). Защита диссертации состоится 15 декабря 2023 г. в 14:00 на заседании специализированного совета 058 "Педагогика" ВАК РА по присуждению учёных степеней при Ереванском государственном университете по адресу ул. Абовяна 52а, 0025, г. Ереван, РА.

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. XXI век считается эпохой медиапотоков, инновационных образовательных технологий, технического прогресса, инновационного образования, онлайн-инструментов и инновационных образовательных платформ. Новые образовательные платформы, образовательные онлайн-ресурсы, стремительно развивающиеся веб-сайты виртуальной реальности и системы управления обучением (СУО) приводят к тому, что профессионалам и участникам сферы образования необходимо овладеть навыками применения СУО и максимально использовать возможности, предоставляемые новой реальностью.

Цель исследования – совместить очное обучение с методом «смешанного обучения», благодаря чему можно было бы увеличить и улучшить уровень знания английского языка в неязыковом вузе.

Научная новизна исследования:

1. В неязыковом вузе (Армянском государственном экономическом университете) впервые было организовано и проведено смешанное обучение для выяснения эффективности данного метода с целью повышения уровня владения иностранным языком (английским).
2. Разработаны и загружены уроки на онлайн-платформы с последующей организацией смешанных уроков с четко структурированными и разработанными упражнениями и заданиями, эффективность которых обоснована в исследовании.
3. С помощью онлайн-инструментов разработаны онлайн-задания, направленные на обогащение и закрепление словарного запаса делового английского языка, равно как и обоснована их результативность и эффективность.
4. Разработана мотивационная матрица преодоления 'эффекта плато' при обучении иностранным языкам на основе внешних, внутренних, положительных и отрицательных мотиваций студентов, которую мы

назвали «Матрицей плато». Модель PINE была разработана, чтобы помочь преодолеть эффект плато в изучении языка, что позволит повысить мотивацию и интерес к изучаемому языку.

5. На онлайн-платформе www.nearpod.com нами было сконструировано 6 онлайн-уроков со специально разработанными заданиями, упражнениями, играми и тестами. Уроки были проведены с использованием метода смешанного обучения, а по полученным отчетам и результатам тестирования была оценена эффективность смешанного обучения, тем самым данный метод обучения оказался обоснованным.
6. Данные и результаты, полученные из проверочного, текущего и итогового тестирования, а также отчетов онлайн-уроков были проанализированы с помощью программы Microsoft Excel, созданы диаграммы представления результатов, что подтверждает эффективность проведенного обучения.
7. Было предложено авторское (Торгомян К.) определение термина «смешанное обучение».

Теоретическая значимость исследования. С точки зрения преподавания посредством смешанного метода обучения была изучена и проанализирована методическая литература, а также различные исследования по вопросам преподавания английского языка. Разработаны онлайн-уроки, которые загружены на онлайн-платформы, разработаны модели PINE и «Plateau Matrix», которые способствуют совершенствованию и укреплению словарного запаса делового английского языка.

Практическая значимость исследования. Результаты, полученные в ходе исследования, позволяют заключить что смешанное обучение повышает уровень владения деловым английским языком и укрепляет полученные студентами знания. В работе была разработана комплексная система онлайн-занятий, направленная на повышение эффективности уроков. В процессе проведения занятий на основе данной компексной системы у студентов наблюдалось улучшение знаний повышение уровня знания и обогащение словарного запаса делового английского языка.

Структура и объём работы. Диссертация общим объёмом в 223 страниц состоит из введения, трёх глав, заключения, рекомендаций, списка использованной литературы и 25 приложений.

TORGOMYAN KRISTINA MELSI
METHODOLOGICAL SYSTEM OF BLENDED LEARNING OF ENGLISH IN A NON-LINGUISTIC UNIVERSITY

Thesis for the degree of Candidate of Sciences in Pedagogy, specialty 13.00.02 "Methods of teaching and learning" (English). The defense of the thesis will be held on December 15, at 14:00 at the session of the Special Board 058 SCC (Supreme Certifying Committee) of RA to award a scientific degree at Yerevan State University at Abovyan str. 52a, 0025, Yerevan, Armenia.

The topicality of the research: The 21st century is an era of media streams and flows, innovations, innovative educational technologies, technological advances, innovative education, online tools, and innovative educational platforms. New educational platforms, online educational resources, rapidly growing virtual reality websites, and learning management systems (LMS) currently lead to the necessity of education professionals and instructors to become proficient and acquire skills to use online resources and LMSs extensively and benefit from all the opportunities the new reality offers.

The aim of the research is to combine face-to-face education with the "blended learning" method, which would enable us to enhance and improve the level of English knowledge in a non-linguistic university.

The scientific novelty of the research

1. In a non-linguistic university, the Armenian State University of Economics, for the first time, blended learning has been designed and implemented to underline the effectiveness of this method that improves and enhances the level of foreign language proficiency (English).
2. Lessons with clearly structured and designed activities and tasks were specially designed, developed, and uploaded to online platforms. Blended lessons were carried out during the semester and its efficiency was justified by the results obtained.
3. Online tasks were developed through online tools to enrich and reinforce Business English vocabulary, and their effectiveness and benefits were identified and determined.
4. The motivation matrix to overcome the language learning plateau when teaching foreign languages (English) was designed and developed based on positive, intrinsic, negative, and extrinsic motivation of students that we entitled "Plateau Matrix". The PINE model was designed and developed in order to overcome the language learning plateau, enabling students to be more engaged and motivated when learning English.

5. On the www.nearpod.com online platform, six online lessons with specially designed tasks, exercises, games, and tests were developed and implemented during blended learning process. Based on the reports and results of the online tests this website generates automatically, the effectiveness of the blended learning modality was justified.
6. The data and results gathered and analyzed from the diagnostic, progress, and final tests, as well as the reports automatically generated by the online lessons were analyzed using Microsoft Excel program, and specific models of these results were developed, which justifies the effectiveness of the implemented blended learning method.
7. We have designed, developed, and proposed our own definition of "blended learning".

The theoretical significance of the research. From the standpoint of blended learning modality, methodical literature and various researches on teaching English have been identified, studied, and analyzed. Online lessons have been designed, developed, and uploaded to online platforms. PINE and "Plateau Matrix" models were developed that highly contribute to the improvement and reinforcement of Business English vocabulary and foreign language acquisition.

The practical significance of the research. The processes, methods, and effective use of experimental teaching principles implemented during the research enable us to consider that blended learning improves Business English knowledge and strengthens and enhances the knowledge acquired. In the thesis, a complex system of online lessons was designed and developed, where engaging and interest-provoking activities and exercises increased the efficiency of these lessons. Consequently, they underlined the improvement and enrichment of Business English vocabulary knowledge.

The structure of the research. The thesis is 223 pages long and comprises an introduction, three chapters, a conclusion, suggestions, a list of references, and 25 appendices.